ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

2 ապրիլի 2026 թվականի N 444-Ա

«ՍՊՈՐՏԻ ՁԱՐԳԱՑՄԱՆ «ԱՍԱԴԱ» ԿՐԹԱԿԱՆ ՀԱՄԱԼԻՐ» ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՎԱՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ԵՎ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ԳՈՒՅՔ ՀԱՆՁՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Կառավարության կառուցվածքի և գործունեության մասին» օրենքի 11-րդ հոդվածի 8-րդ մասը, «Պետական գույքի կառավարման մասին» օրենքի 6-րդ հոդվածի 1-ին կետը, 30-րդ հոդվածի 1-ին մասը՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Հավանություն տալ «ՍՊՈՐՏԻ ՁԱՐԳԱՑՄԱՆ «ԱՍԱԴԱ» ԿՐԹԱԿԱՆ ՀԱՄԱԼԻՐ» հասարակական կազմակերպության (գրանցման համար՝ 211.171.03273, այսուհետ՝ կազմակերպություն) կողմից ներկայացված Գույքի բարելավման և գործարար ծրագրին (այսուհետ՝ ծրագիր)՝ համաձայն հավելվածի:

2. Հայաստանի Հանրապետության սեփականությունը հանդիսացող՝ Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության պետական գույքի կառավարման կոմիտեին (այսուհետ՝ կոմիտե) ամրացված՝ քաղաք Երևան, Էրեբունի Վ. Ավանեսովի փողոց թիվ 1 հասցեում գտնվող 1941.6 քառ. մետր մակերեսով տարածքը (20.09.2023 թվականին տրամադրված սեփականության իրավունքի գրանցման վկայական N 20092023-01-0016, այսուհետ՝ անշարժ

գույք) 20 տարի ժամկետով անհատույց օգտագործման իրավունքով հանձնել կազմակերպությանը՝ համաձայն սույն որոշման 1-ին կետով հավանության արժանացած ծրագրի:

3. Կոմիտեի նախագահին՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո երկամսյա ժամկետում կազմակերպության հետ կնքել սույն որոշման 2-րդ կետում նշված անշարժ գույքի անհատույց օգտագործման պայմանագիր (այսուհետ՝ պայմանագիր)՝ դրանում նախատեսելով, որ՝

1) կազմակերպությունը պարտավոր է պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո 5 տարվա ընթացքում կատարել 380,000,000 դրամի ներդրումներ՝ համաձայն ծրագրի.

2) կազմակերպությունը պարտավոր է ծրագրով նախատեսված աշխատանքների կատարումը հավաստող համապատասխան փաստաթղթերը ներկայացնել կոմիտե՝ յուրաքանչյուր հաշվետու տարվա ավարտից հետո 15 աշխատանքային օրվա ընթացքում.

3) սույն կետի 1-ին ենթակետով նախատեսված ներդրումային պարտավորությունները չկատարելու կամ մինչև 50 % կատարելու դեպքում կազմակերպությունը 6 ամսվա ընթացքում պարտավոր է կատարել տվյալ ժամանակահատվածի համար նախատեսված, բայց չկատարած ներդրումներն ամբողջությամբ՝ միաժամանակ Հայաստանի Հանրապետության պետական բյուջե վճարելով տուգանք՝ չկատարված ներդրումների գումարի 15 % -ի չափով.

4) սույն կետի 1-ին ենթակետով նախատեսված ներդրումները 50 կամ ավելի տոկոսով կատարելու, սակայն ամբողջությամբ չկատարելու դեպքում կազմակերպությունը 4 ամսվա ընթացքում պարտավոր է կատարել տվյալ ժամանակահատվածի համար նախատեսված և չկատարած ներդրումներն ամբողջությամբ՝ միաժամանակ Հայաստանի Հանրապետության պետական բյուջե վճարելով տուգանք՝ չկատարած ներդրումների գումարի 10 %-ի չափով.

5) ծրագրի շրջանակներում կատարված բաժանելի և անբաժանելի բարելավումները վերադարձման, իսկ դրանց արժեքները հատուցման ենթակա չեն.

6) սույն կետի 3-րդ կամ 4-րդ ենթակետերով սահմանված պարտավորություններից որևէ մեկը չկատարելու դեպքում կազմակերպության հետ կնքված պայմանագիրը ենթակա է լուծման, ընդ որում, պայմանագրի լուծման դեպքում կազմակերպության կողմից անշարժ գույքում ներդրված գումարները հատուցման ենթակա չեն.

7) պայմանագրի նոտարական վավերացման և պայմանագրից ծագող գույքային իրավունքների պետական գրանցման ծախսերը ենթակա են իրականացման կազմակերպության միջոցների հաշվին.

8) սույն որոշման 2-րդ կետում նշված անշարժ գույքից 1128.8 քառ. մետր մակերես ունեցող փայտամշակման արհեստանոցը և 252 քառ. մետր մակերես ունեցող մարզադահլիճն օգտագործվելու են համատեղ Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության «Երևանի արհեստի պետական քոլեջ» պետական ոչ առևտրային կազմակերպության հետ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

Երևան

03.04.2026
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ